ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 11 » սեպտեմբերի 2025թ. № 034/27- 2977

«Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ-ին
ք. Երևան, Քանաքեռի 13փ. 32/1 տ.
էլ. փոստի հասցե՝ info@grandindpection.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Սպիտակի համայնքապետարանի և «Գրանդ Ինսփեքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2025 թվականի օգոստոսի 7-ին կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-25/020-1 ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագրի համաձայն Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Սպիտակ համայնքի կարիքների համար Սպիտակ համայնքի Սարահարթ և Կաթնաջուր բնակավայրերում ենթակայանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան և սահմանված ժամկետներով:

«Գրանդ Ինսփեքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել պայմանագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունները և մինչ օրս Սպիտակի համայնքապետարան չի ներկայացրել ընկերության կողմից հաստատված համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Վերոգրյալից ելնելով, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը՝ Սպիտակի համայնքապետարանը 2025 թվականի սեպտեմբերի 11-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է «Գրանդ Ինսփեքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ՝ 07.08.2025թ.-ին կնքված թիվ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-25/020-1 ծածկագրով պայմանագիրը:

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գրանդ Ինսփեքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Սպիտակի համայնապետարանը դիմելու է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ